

տեղացի գիւղացիներին։ Տնտեսական տեսակէտից եկեղեցները աննախնձելի վիճակի մէջ են։ չունեն շարժական և անշարժ կայտեր, նրանց եկամուտները կազմում են ոլողվրդական նւէրները։

Քահանանեները。 — Զահարմանալը հարուստ է քահանաների կողմից։ Համարեա ըլոր մինչ գիւղերն էլ ունին իրենց քահանաները, միայն մի քանի փոքր գիւղեր չունեն, նրանի էլ օգարտում են մօտակայ գիւղերի քահանաներից։ Այժմ Զահարմանալում կան 20 քահանաներ։ Առասպարակ նրանք, բացառութեամբ մի քանիսի, սահմանափակ կրթութեան և զարգացման տէր են և համարեա ոչինչ հասկացողութիւն չունեն հասարակական, զրական և այլ ինգիրների մասին, որով առարկայական ոչ մի գեր չեն կատարում հասարակական կենակում։ Նրանցից շատերի համար գոյութիւն չունեն ժողովորդ, դպրոց, լուսաւորութիւն։ Այդ է պատճառը, որ նրաք կորցը են իրենց բարոյական հեղինակութիւնը ժողովրդի առաջ։

Գյորժակայ-քահանանեներ։ — Զահարմանալի հոգեոր-եկեղեցական գործերը վարելու համար նշանակում են երկու գործակալ - քահանաներ, որոնց պարտականութիւններն են նսկել կրօնական, եկեղեցական, դարոցական և այլ ինցիրների վրա։ Նրանք ընտրում են Պարսկա - Հնդկաստանի թեմակալ առաջնորդի կողմից և զեկավարում են որոշ ծրագիր - կանոնագրով։ Այժմ գաւառի գործակալ - քահանաներից մէկը Տէր - Յուսիկ քննյ։ Տէր-Արազսեան է, որի հսկողութեան և սրամադրութեան ներքոյ են գունում Մամութա, Հաճինարդ, Բալորու, Սիրաբ և Անմաքարդ գիւղեր, իսկ միտք՝ Տէրեղիկ քննյ։ Յակըտեանն է, որի մերժութեան վերին - Փօնարք, Յածի - Քօնարք, Մուչիզան, Շահըւլազ, Լիքասեան, Մամուռան, Աղբուլազ, Սինազան և Դէյշեն գիւղերը։

Արակէ զի գործակալ - քահանաներն անթերի կերպով կատարեն իրենց պարտականութիւնները, թէմական առաջնորդ Սահակ Արք-Եպիսկ. Այգատեանը զծել է մի կանոնագրութիւն, որի էական մասերն են։

Ա. Հակել Զահարմանալ գաւառի գիւղերի եկեղեցիների բարեկարգութեան և բարեւալութեան վրայ ու առաջն զարցառութիւն և թերացման կատարել սուրբ եկեղեցու ժամերգութիւնը։

Բ. Քահամաթերը պարտի առաջն զամցառութեամ մի մատեսաթի մէջ արձամագրել ամէթ մի ծնութիւ, մկրտութիւն, պահակ և մասն։

Գ. Քահամաթերը պէտք է այլուրզ նսկին երցիւ իրավութեամբ կրայ, որ եկեղեցակամ հաշիւթ թութեամբ և կամուալուրապէս արձամատրեթ։

Դ. Պահապահի քահամաթ միջն որ գործակալից թոյլաւութիւմ չտասայ, իրաւութ զութի պահակը։

Ե. Գործակալ քահամաթերը իրաւութ ութեամ գիւղերում պատահած ամախորժ խնդիրները քըմ են և զին արձակելու։

Զ. Գլւաք է նոր տամեթ ըոլոր քահամաթերը զիւղերում զտմուղ զգայիթ դպրոցների բարզաւանմաթ զործին։

Է. Գործակալ քահամաթերը պարտիթ իրենց պաշտօնը արժամատրակէս կատարել և չթերամալ։

Աւելորդ է ասել, որ գործակալ - քահանաները շատ անզամ չարաշար են գործադրում իրենց յանձնած պաշտօնը և աւելի տանջանք պատճառում արդէն տանջանք գիւղացիներին։

### Վիճենեա

### ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Ժարութակելի)



## ԱՆԻՒ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

Անիւ աւերակներուն մէջ ուխտաւորներու յատուկ բնակարան մը կար ժամանակին, որ յանձնուած էր լեռնցից բարի վանականի մը՝ Միջրայէլ վարդապետի հսկողութեան։ Ղարաբաղցի այս եռանդուն վարդապետը՝ իր այցելուներուն տրամադրութեան տակ զրած էր Տօմար մը, որոն մէջ այցելուները կը գրէն իրենց կրած տպաւորութիւնը։ Չեմ յիշեր որ այցելուն այց Տօմարին մէջ նշանակած էր, թէ « Անիւ Թահգրան մըն է »։

Եւ չէր չափազանցած։

Այո՛, Անիւ թանգրան մըն է, ուր դարերէ ի վեր կը պահուին հայկական գեղարուեստի հսկայական կոթողները, որոնք զարմանց կը պատճառեն նոյն իսկ եւրոպացի գիւղականներու։

Անիւ գեղարուեստական շինութեանց վրայ գիտնականներու ուշազրութիւնն հըրաւորոց առաջին հմուտ և պատրաստուած ճամբորդն եղած է Կեր Porter Անգլիացին, որ 1817ին այցելած է Անիւ։ Ասոր

յաջորդած են ուրիշ Անգլիացի մը, W. Hamilton, և այլք՝ որոնց մէջն ամենէն նշանաւորն եղած է Charles Texier ֆրանսացի ճարտարապետը, որ իր *Description de l'Arménie, la Perse et la Mésopotamie* միաժամ եռահատոր հսկայ աշխատութեամբ (տպ. 1843ին) հիմք դրած է Անիի գիտական ուսումնա սիրութեան, սալով քազմաթիւ յիշատա կարաններու չափական պատկերները։ Բայց այս նշանաւոր քաղաքին՝ պեղումներու միջոցով կանոնաւոր ուսումնասիրութեան ձեռնարկած է մեր յարգելի նախագահը, Պրոֆ. Նիկողայոս Մառ, որուն Փառարած ծափահարելի մեծ գործը յաւստեանս պիտի մնայ հայ բանասիրութեան և մասնաւորապէս Անիի պատմութեան Տարբերոց մէջ։

Անիի գոյութիւնը շատ հին է։

Ստոյգ Կերպով չենք կրնար ըսել, թէ Երբ եւ որո՞ւ ձեռքով հիմուած է նախական քաղաքը։ Այսափը գիտենք, սակայն, թէ Քրիստոսի 321 թուականին Հայոց Տրդատ Գ.րդ թագաւորին կողմէ անկեայ նուէր տրուած է կամսարականներու, որոնց ազգական էին Տրդատի։

Անիի մէջ իմ գտած մէկ արձանագրութիւնս (որ կը կրէ 622 թուականը), ցոյց կու տայ թէ նոյն թուին Անիի բնակելի աւան մը կամ գոնէ գիւղ մը նէր, և Արիսողոմ անոնով վարդապետ մը հիմնած է Միշնարերդի ամենաշին եկեղեցին։ Այս այս արձանագրութիւնը։

«Էս՝ Արխոնդոմ վարդապետ, յիեկը զեկեցիս, ի բուականորեան ՀԱ», այսինքն՝ Քրիստոսի 622 թուին։

Ք.րդ դարուն՝ կամսարականները Շիրակ գաւառն — Անիով մէկտեղ — ծափացին Բագրատունեաց տոհմէն Աշոտ Մասկեր գօրավարին (805 — 825)։

Բագրատունից իրենց արքայական արուոց ժամանակ մը Շիրակաւան և Բագրատան աւանները թափառեցնելէ ետք՝ Քերջնականապէս Անի փոխարքեցին։

Անի՝ Բագրատունեաց մայրացաղաք եղաւ Աշոտ Գ.րդ Ողորմածի ժամանակ

(953 — 977), ճիշդ 961ին։ Այս թագաւորը Անին շրջապատեց պարիսպներով, որոնց մինչև Քերջին ժամանակներու գետնին տակ թաղուած կորսուած էին, բայց չնորհիւ Պրոֆ. Մառի տքնաջան պեղութեարուն անոնց երևան ելան, և հաստատեցին մեր պատմիչներու խօսքերը։

Աշոտ Գ.րդին Մերատ Բ.րդ (977 — 989), իր հօր յաջորդելով՝ անհամեմատ Կերպով ընդարձակեց Անին, և նորանոր շինութիւններով ու հաստակառոյց երկար պարիսպներով ամրացուց քաղաքը։ Պարիսպներու շուրջն ալ խորունկ փոսեր փորել տուաւ, պատերազմի ժամանակ զանոնց ջուրով լեցնելու և թշնամիին մերձնեալն արգիլելու համար։ Մերատ Բ.րդ եղած է նաև բուն հիմնադիրը Անիի Ս. Աստուածածնայ նուիրուած Մայր Եկեղեցին, որուն ստորին մասին վրայ փորագրուած է հետեւեալը։ — ՄԵՊՏԱՑ է։ Դիքախտարար՝ Մերատ իր եկեղեցին աւարտումն առանց տեսնելու մեռաւ, և գործը շարունակեց իր եղօրս և յաջորդին՝ Գագիկ Ա. Շահնշահի (989 — 1020) կինը՝ կատրանիդէ թագուհին։ Կարևոր է այս մասին կարդալ նոյն եկեղեցին հարաւային պատին վրայ փորագրուած հետեւալ յոյց շահնշական արձանագրութիւնը։

«Ի նծ թուականիս Հայոց, Տօթ թուականին Հոռոմոց, թենիամին զրէ։ Ի ժամանակս աստուածապատիւ և հոգեւոր տեառն Ալրասի, Հայոց կաթաղիկոսի, և ի մեծափառ թագաւորութեանն Գագկայ, Հայոց և Վրաց շահնշահի, եւ՝ և կատրանիդէ, Հայոց թագուհի, զուսոր և Վասակայ, Ալեւեաց թագաւորի, յոդոր և մութիւնն Աստուծոյ ապաւինհցայ, և և հրամանաւ առն իմոյ՝ Գագկայ շահնահանից՝ շինեցի զուսոր կաթաղիկէս, զոր և էր հիմնադրեալ մեծին Ամպատայ։ Եւ կանգնեցաց տուն Աստուծոյ, նորոգ եւ կենդանի, ծնունդ հոյքեր և արձան և մշտնշենաւոր, զարդարեցի և զարդիւր և պատուականաւը, նուէրց ինձ ի Քրիստոս, եւ զարմից իմ եւ որդուց՝ Մելպատայ, և Աքասայ և Աշոտոյ»։

Այս շինութեան ճարտարապետն եղած է հայ գեղարուեստի պատմութեան մէջ բացածանօթ Տրդատ ճարտարապետը, որ 989ի գետնաշարժէն վլասուած է. Պոլսոյ Այս - Սօֆիա եկեղեցին նորոգութիւնն ալ կատարած է, որու մասին հետեւելը կ'ըսէ ժամանակակից պատմիչն՝ Առեփանոս Ասողիկ.

«Եւ զինի սակաւ աւուրց շարժեցաւ և աշխարհն Յունաց ահաւոր զզրդմամբ, «մինչեւ կործանել բազում քաղաքաց և զիւղից և զաւառաց, ևս առաւել ի «Թրակացւոց և Բիւզանդացւոց աշխար. «Հին հանդերձ ծովով, որ ի մէջ նոցա «ծածանեալ ծիէր սասանմամբ, մինչեւ ի «նոյն ինքն ի թագաւորական քաղաքին «Կոստանդնուպոլիսի մեծաշուր և բազմա. «պայծառ զարդ հրաշատեսիկ սեանց և «պատկերաց և եկեղեցեաց մեծամեծաց «Գլուզանիւր, և նոյն ինքն Սոփիայն, «որ կաթողիկէն է՝ հերձանիւր պատառ. «մամբ կերուստ ի վայր։ Վասն որոյ «բազում ջան եղեւ արհեստաւոր ճար. «տարացն Յունաց առ ի վերստին նորո. «զել, Այլ անդ դիպեալ ճարտարապետին «Հայոց Տրդատայ բարագործի՝ տայ զո. «Քինակ շինուածոյն, իմաստուն հանձա. «ըով պատրաստեալ զկազապար կազ. «մածոյն և սկզբնաւորեալ զշինելն. որ «և գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան «զառաջինն :» (Ասողիկ, Պամ. Տիեզերական, զիրք Փ, գլ. Խէ):

Գագիկի և Կատրանիդէի՝ արքայական այս ամոլին իկեղեցասիրութեան ապացոյց է նաև այն՝ որ Կատրանիդէի կատարած շինութենէն զուրու՝ Գագիկ (մի՛ և նոյն տարին) Տրդատ ճարտարապետի ձեռ. ցով ուրիշ եկեղեցի մը հիմնած է Անիի Մաղկոցածոր թաղին բարձունքին վրայ, և նուիրած՝ Ս. Գրիգորի անուան, ինչպէս կը նկարագրէ նոյն պատմիչը, հետեւել բառերով.

«Թայնմ ժամանակի, յորում լնոյր «լրութեամբ ամն Ռ. մարմանալոյ կամ «մարգանալոյ Ցեառն մերոյ, ի Վաս. «մ կայսեր յաւուրս, Գագիկ արքայ

«Հայոց խորհուրդ բարի ի յանձին կա. «կեալ՝ զմեծացն եկեղեցին, որ ի բաղա. «բռուղաշտի, անուամբ սրբոյն Գրիգորի «շինեալ, որ էր վլեալ և կործանեալ՝ «կամեցաւ նոյնածն չափով և յօրի. «նուածով յարդարել ի քաղաքին Անոյ, «հիմնարկեալ ի կուէ Մաղկոցածոր ձո. «ըոյն, ի բարձրաւանդակ տեղովն, տար. «փատենչ տեսողացն, մեծատաշ, վիմար. «գեան, կոփածոյ վիմօր, մանուածոյ քան. «զակաւ յօրինեալ, լոյսանցոյց պատու. «հանօց, երրակի զրանց զռանդեօց, «սցանչատես տեսլեամբ գմբէթաւորեալ, «գունակ գերամբարձ և երկնանման գըն. զին » : (Ասողիկ, Պամ. Տիեզ., Գիրք Փ, գլ. Խէ):

Գագիկի շինել տուած այս փառաւոր և փառազարդ եկեղեցին, որ բոլորովին կործանած էր, իր աւերակներէն դուրս հանեց զարձեալ Պոռք. Մառ, և հոն զաւա. Գագիկի մէկ արձանը :

Անշուշտ նոյն Տրդատի հսկողութեան տակ կառուցուած է նաև «Խիսանց իշխան» Գրիգոր Պահլաւունիի (± 982) առատածնութեամբ 980ին շինուած ե. կեղեցին, որ Ապուղամբեանց տոհմին սեպ. հական աղօթատեղին եղաւ. Այս Գրիգոր իշխանի անունը կը կարդացուի նոյն տա. ճարին արևելեան կողմի արձանագրութեան մէջ, այսպէս.

«Քրիստո Աստուած, յորժամ զաս «փառոց հաւը ի նորոգել զերկիր, ողոր. «մահ Գրիգորոյ, ծառայի ք:» :

Տաճարիս պահպանութեան և առօրեայ պէտքերուն համար Գրիգորի կինը՝ Շուշան իշխանուհին նուիրած է զանազան կա. լոււածներ, ինչպէս կը կարդանը նոյն տա. ճարին զրան վրայի երկու արձանագրու. թեանց մէջ.

«Կամաւեցն Աստուծոյ, ի նօթ թուա. «կանիս, ես՝ Շուշան, տիկնաց տիկին, «զիւգակից Գրիգորոյ իշխանի, ետու «զՄրուանայ կուզպակս ի Սուրբ Գրիգոր: «Խոկ որ հակառակ զայ յիմոց կամ յաւ. «տարաց, Ցօլիցն նոդոված է հոգով և «մարմանով:» — «Յանուն Աստուծոյ, կամ

« եղեւ իմ՝ Շուշանայ, տիկնաց տիկնոջ, « որ ետո զլիրուանա կուպակի ի Առոր « Դրիգոր, Զ դրամ. Է Սեղայի, և Ն Մը « բուանայ: Փջ աւր ժամ ի Քրիստոս »:

Այս անզուգական իշխանին և իշխանուհին որդիներէն մէկը՝ Ապղարիպ մարզպան, իր անձնական ծախըով շինել տուած է Անիի Ա. Փրկչի Նեղեցին, ինչպէս կը վկայեն հետևեալ երկու արձանագրութիւնները.

1. « Ի ՆԶԴ Թուականիս, ես՝ Ապղար « բիպ մարզպան, եղի հրովարտակ ի Արմ « պատայ (Գ) շահանշահէ առ կայսրն Յոււ « նաց՝ Միթսէլ, ի կոստանդինուպոլիս, եւ Ա շատ ջանի և մեծածախ զամնիւ բերի « մասն ի Արբոյ Խաչէն. եւ եկեալ կա « տարեցի զտաճարս զյայ, եւ զնշանն « լուսոյ կանգնեցի, ի պասակ հարսինս Քը « բիստոսի. և եղի լուծ սպասաւորաց եւ « Կեղեցւոյ՝ զկիւրակէին աւըն զիշերա « պաշտաւն առնել, մինչև ի զալուսոն « Քրիստոսի: Եւ քահանայ որ մեռանի ի « Առօրք Փրկչիս, քառասունը մի կալցեն « յեկեղեցիք: Եւ եթէ որ ի քահանայից « եկեղեցւոյ՝ եւ յիմ սպասուց և կամ ի « զրենոյ յափառակէ, կամ ծախելով, կամ « զինչ և իցէ պատճառանաւը, և կամ « զափանութեան զինտ երթայ, և զեկե « զիցւոյ մուտք խորէ, և Առօրք Փրկչիս « ի պէտո ոչ անցուցանէ, ՑԺԸ հայրապե « տացն նզովեալ լիցի: Եւ որ զդրիգոր « իդիցու որդիք յեկեղեցպանութենէ հա « նէ, կրկին անիծիցդ պարուական լիցի: « Իսկ կատարիչ զրիմ՝ աւրնեալ լիցի »:

2. « Յամս աստուածապատիւ և հոգե « ւոր տեառն Պետրոսի, Հայոց կաթողի « կոսի, եւ ի թագաւորութեան Ամբատայ « (Գ), որգոյ Գագկայ (Ա) շահանշահի, « ի ՆԶԵ Թուականիս, ես՝ Ապղարիպ « մարզպան, որդի Գրիգորյոյ իշխանի, եւ « թոռն Ապուղամրի, եւ եղրայր Վահրա « մայ և Վասակայ, շինեցի զԱռօրք Փրկչիչ, « ի մայրաքաղաք յԱնի, շատ ջանիւ եւ « մեծածախ զամնիւ. եւ զնեցի՝ ի հալալ « ընչից իմոց՝ կուպականի Գ, եւ ձիթաւ « հանը, եւ այզի, և հողեար. և ետու

« Առօրք Փրկչիչս, և զարդարեցի ոսկով « և արծաթով եւ ակամբը պատուակա « նաւը. և ետու Աւետարան և Ձաւնա « կան, և նորոգեցի Հին և նոր կատակա « բանաւը. և կանգնեցի միլ առաջի Առօրք « Փրկչիս: Արդէ ո՞ց ի մեծաց կամ « ի փորունց՝ յիմ սպասուց և կամ յայլ « իրացս որ ետու, եւ յափշտակէ եւ իւա « փան լիցի, ՑԺԸ հայրապետացն նզովեալ « լիցի: Խակ, յետ ելից իմոց յաշիարհէս, « եղի լուծ ի վերայ սպասաւորաց եկեղեց « լոյս՝ զվարդեվառին քառասունսն ան « խափան կատարել, մինչև ի զալուսոն « Քրիստոսի: Բնդ նմին ևս զ..... որդոյ « Գագկայ՝ Ամբատայ (Գ) շահանշահի »:

Հաւանական է, որ Անիի Ա. Առաքելոց եկեղեցիին գիմնադիրն ալ նոյն Ապղարիպ մարզպանն ըլլայ:

Խակ Ապղարիպի միւս եղբայրը՝ Վահրամ սպարապետ, որ՝ Անիի պատմութեան մէջ մեծ զեր կատարած է, վեստ Արքիսի զաւաճանութեանց զէմ մարտելով անվհատ, — 988ին շինել տոնած է Մարմաշէնի Ա. Ասեղիանու եկեղեցին, որուն շինութիւնն աւարտած է 1029ին, այսինքն՝ քառասունը մեկ տարիէն, ինչպէս կ'ըսէ նոյն եկեղեցիին հարաւային պատին վրայի գլխաւոր արձանագրութիւնը.

« Շնորհին Աստուծոյ, ես՝ Վահրամ, « իշխանաց իշխան եւ անթիպատ պատրիկ, որդի Գրիգորի, իշխանի Հայոց Միեւ « ծաց, ի ցեղէ Պահլաւունի, եւ ի զար « մից Արքոյն Գրիգորի, Հայոց Լուսաւորչի, որ յաղագի Քրիստոս յուսուն՝ հիմ « նազրեցի զուրք եւ զտիեղերական ուխտ « Ամրմաշէն, սկսեալ ի ՆԱՅ Թուականին « Հայոց, յաւուրս Ամբատայ, որդոյ Աշու « տոյ, Հայոց թագաւորի, մինչև ի մամա « նակս Յովանիսի, որգոյ Գագկայ, Հայոց « շահանշահի, առն իմաստոնյ, շինողի եւ « խաղաղարքի, եւ ի Թուական Հայոց « ՆԱՅ, եւ կատարեցաք մեծ ջանիւ եւ բա « զում ծախիւք՝ ես, եւ մայր իմ՝ Շուշիկ, « Հայոց տիկնաց տիկին, եւ եղաւը իմ՝ « Վասակ, իշխանաց իշխան, որ նահաւ « տակեցաւ ի Թուրքաց պատերազմի, եւ

« Արվարիք, Հայոց մարզպան, եւ մա-  
« նուկն Համզէ, որք էաց ամենայն տամբ  
« եւ տոհմիւ հաւատարիմբ տերանց մերոց,  
« և եւ նահատակեալ ի վերա տան Հայոց.  
« աշխատութեամբ եւ արեամբ մեր եւ որդ-  
« ւոց մերոց, եւ գանձուց առատութեամբ,  
« և եւ ամենայն հնարիւք, ինդրէաբ ըզ-  
« խաղաղութիւն աշխարհիս եւ զհաստա-  
« տութիւն եկեղեցեաց. շննեցաք և այլ  
« բազում եկեղեցիս եւ վանորայս. բայց  
« զոտիի հանգստեանս մերոյ՝ առաւել պա-  
« տուով մեծացուցաք եւ լիացուցաք ամեն-  
« նայն գոյիւք, լերամբք եւ դաշտաւք. ա-  
« ւանդեցաք ի սա՛ գեղս եւ ազարակս գան-  
« ձագինս...»:

Մի և նոյն պատին վրայ կը կարգանք նաև հետեւեալ կարեռ արձանագրութիւնը.

« Ծնորհիւն Աստուծոյ, ես՝ Մարիամ,  
« Արքազաց եւ Հայոց թագուհի, դուստր  
« մեծին Սենեցերիմա, եւ թոռն Գագկա,  
« Հայոց արքայի, որ ետու զջարուս ի  
« սուրբ եւ ի տիեզերական ուխտու Մար-  
« մաշէն, առաջնորդութեամբ հաւը Սոսթե-  
« նիսի, վասն Գագկա՝ իմ պապոյն՝ մե-  
« զաց թողութեան, եւ կատային, իմ հան-  
« կան...»:

Այս արձանագրութիւն մէջ յիշուած Մարիամի՝ վասպուրակնի կերջին թա-  
գաւոր Սենեցերիմ Արծուուի աղջիկն է,  
որ մօր կողմանէ թոռն է Գագկիկ և կա-  
տարանիկի (կատայի). Պատմի՝ ասո՞ր վրայ յենով է անջուշո, որ Մարիամ ինցզինը  
« Այիսազաց եւ Հայոց քափուհի » Կանուանէ:

Պահաւունեաց եկեղեցափութեան ա-  
պացոյց է նաև Բագնայրի (Ղօզիլջա) Ա.  
Աստուծածին եկեղեցիին շնուրթիւնը, զոր  
կատարած է վերյախնալ Վահրամ սպա-  
ռապետի որդիներէն մին՝ Մերատ Մազիս-  
տրոս, մօտաւորապէս 1000 թուականին,

#### Կ. 8. ԲԱՍՄԱՅՆ

(Չարունակելի)



#### ՀՆԱԽՈՍԱԿԵԱՆ

### ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ՀԻՆ ՀԱՅՈՑ ՔՈՎ

=====

#### ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

(շաբ. տես Բազմ. էջ 237)

6. — Ասկեղարը դպրոց կը կոչէ միշտ ուսումնարանը, ինչպէս տեսանք Փաւասու-  
սի և Փարպեցւոյն վկայութեանց մէջ<sup>1</sup>, և  
զոր շատ յաճախ կը գործածէ նաև Աս-  
կերերանի թարգմանիչը<sup>2</sup>, Յաճախապա-  
տումը<sup>3</sup>, և այլը, ուր Մով. Կաղանկայ-  
տուացին ի զարում՝ կը գրէ դպրոցատուն<sup>4</sup>:  
Խոր արմատն է պղիր, պարսկերենէ ծա-  
գած<sup>5</sup>, որ կը նշանակէր զրիչ և նմեր-  
ցող<sup>6</sup>, և միանգամայն աշակերտի իմաստով  
ալ գործածուած<sup>7</sup>, և կոչուած նաև այս  
երկրորդ բառով<sup>8</sup>: Ճեսանք նոյնպէս դր-  
պրոցին ածանցը՝ նշանակութեամբ լիզուի<sup>9</sup>  
և գիտութեանց, ինչպէս « ըրիստոսական  
դպրութիւն » և այլն<sup>10</sup>: Հետեւարար դպրոցն  
էր Վայրը՝ զրիչ, կարգալ, գիտութիւն ու  
լեզուներ ուսանելու, զոր ժի զարը կը  
կոչէր նաև վարդարան<sup>11</sup>, և ժի ու ժի  
զարը՝ դասատուն<sup>12</sup>, հանելով « զաս » բա-  
ռէն՝ զոր պիտի տեսնենք թիչ յետոյ:

Ի՞նչ ձեւ ունէր այդ վայրը: Գիտենք՝ որ  
Հոռվմայեցւոց բով ծածկարան մ'էր պար-  
զապէս՝ շուրջանակի բաց, և Եղյն փո-  
րոցի մէջ կ'ուսուցանէին<sup>13</sup>: Դ-Ե զարերու  
մեր գիշերօթիկ զպրոցները չէին կնար-  
քնականարար աղոնց պէս կէս կամ ամ-  
րողջովին բացօթեայ լինել, որովհետեւ  
միանգամայն բնակարան էին աշակերտաց:

1. Ակա. 237, 240. — 2. Ա-4. Թղթ. Ա, 569-71  
Ան. — 3. Յակո. 57. — 4. Կա. 99. — 5. Թեր.  
146. — 6. Եպ. Գ, 12. Սով. Բ, 183, Կն. — 7.  
Ման. 27. — 8. Սով. 93. Կոր. 27 հւ. — 9. Ակա.  
238. — 10. Ակա. 42, 626. — 11. Ակա. Հմբ. 8. —  
12. Ակա. 4 Գաւը. 300. — 13. Cabr. Ecole, 1792-93.